ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՒԻՑԻԴԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

Վիգեն Մանուկյան

Բանալի բառեր՝ ինքնաքայքայիչ վարք, ինքնավնասում, ինքնասպանություն, սոցիալականացման գործընթաց, հոգեբանական դեզադապտացիա, ապահարմարվողական վարք:

Մարդկության պատմության ողջ ընթացքում մարդը ստիպված է եղել պայքարել մի շարք սպառնալիքների և արատավոր բարքերի դեմ: 21-րդ դարը ևս անմասն չէ այդ պայքարից: Արդի աշխարհը կանգնած է մարդկության կենսագործունեությանը սպառնացող մի շարք գլոբալ մարտահրավերների առջև՝ ահաբեկչություն, թմրամոլություն, թրաֆիկինգ, էկոլոգիական խնդիրներ և այլն: Թվարկվածներից պակաս կարևորություն չի ներկայացնում նաև դեռ հնագույն ժամանակներից մեզ հայտնի մի երևույթ, ինչը մարդկության կողմից որակվել է որպես ինքնասպանություն:

Ինքնասպանություն *– ինքնասպանությունը հոգեբանական դեզադապտացիայի (ապահարմարման) արդյունք է, երբ անձը հոգեկանի ախտաբանական կամ սահմանային վիճակում ինքնակամ /ներծին կամ արտածին ազդակներից դրդված/ դիմում է լետալ ավարտով աուտոդեստրուկտիվ գործողությունների: Սա ինքնասպանության ընդհանրացված սահմանումն է, որն իր մեջ ամփոփում է և՛ հոգեկան հիվանդների, և՛ հոգեպես առողջ անձանց ինքնասպանությունները: [1]*

Քանի որ խնդիրը համամարդկային է, ուստի Հայաստանի Հանրապետությունը նույնպես չի կարող զերծ մնալ այդ երևույթից: Ինքնասպանությունը նույնպես, իբրև մարդկության մեծագույն չարիք, ընդգրկում է կյանքի բոլոր ոլորտները. դրանից անմասն չէ նաև ՀՀ զինված ուժերը: Անհրաժեշտ է դիտարկել, որ ինքնավնասումների ու ինքնասպանությունների դեպքերը բնորոշ են աշխարհի բոլոր երկրների զինված ուժերին:

Զինվորական համակարգում տեղի ունեցող ինքնասպանությունների և ինքնավնասումների տրամադրությունների (մտքերի) ձևավորմանն ու զարգացմանը նպաստող գործոնների ուսումնասիրության խնդրի արդիականությունը մարդկային կյանքի արժևորման բարոյական ընկալումն ու ինքնաքայքայիչ վարքով ուղեկցված դեպքերով պայմանավորված՝ զինված ուժերի մարտունակության, ինչպես նաև բանակ–հասարակություն կապի ամրապնդմանը խոչընդոտող հնարավոր բացասական ազդեցությունից զերծ մնալն է:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում տեղի ունեցող բարեփոխումների համատեքստում կարևորվում է ինքանասպանությունների և ինքավնասումների դեպքերի կանխարգելման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը: Ընդհանուր առմամբ, զինված ուժերում ինքնասպանությունների և ինքնախեղումների կանխարգելման աշխատանքները կրում են համակարգված բնույթ, և դեռևս նախազորակոչային տարիքի երիտասարդների վերաբերյալ ուսումնական հաստատությունների և զինկոմիսարիատների աշխատակիցների կողմից իրականացվում են ուսումնասիրություններ, ինչպես նաև՝ փաստահավաք տեղեկատվության վերլուծություն:

Հոդվածի ***նպատակն է՝*** *զինված ուժերում տեղի ունեցած ինքնավնասումներին և ինքնասպանություններին նպաստող գործոնների ուսումնասիրությունը, դրանց առնչվող*

---

* Հոդվածն ընդունվել է 28.01.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել հ.գ.թ., դոցենտ Զ. Ասատրյանը: 04.02.20:

խնդիրների վերհանումն ու քննարկումը, ինչպես նաև հնարավոր նմանօրինակ դեպքերի՝ ժամանակին կանխարգելմանն ուղղված նոր ուղղությունների կանխորոշումը:

Ուսումնասիրության առարկա են հանդիսանում անձի տարիքային զարգացման տարբեր փուլերում ինքնաբայքայիչ վարքի ձևավորման նախադրյալներն ու զինված ուժերում զինծառայողի ինքնաբայքայիչ վարքին նպաստող հնարավոր գործոնները:

Նյութի հիմքում ընկած են 2011-2018թթ. զինված ուժերի տարբեր զորամասերում տեղի ունեցած ինքնասպանության որոշ դեպքերի, 150 ժամկետային պարտադիր զինծառայողների շրջանում անցկացրած հետազոտության և «Χ» զորամասում լրացուցիչ հսկողության հաշվառված 35 զինծառայողների հետազոտության արդյունքները:

Ուսումնասիրություններն անցկացվել են ինքնավնասումների և ինքնասպանությունների դեպքերով անցկացված ծառայողական քննությունների նյութերում առկա տվյալների, որոշ դեպքերում նյութականացված վկայությունների, դեպքի վայրի ուսումնասիրման ու պրոֆիլավորման (մոդելավորման), համածառայակիցների հետ անհատական աշխատանքների արդյունքում ստացված տվյալների, ազգականներից ստացված տեղեկությունների, անձնական գործերի և անկախ բնութագրերի ուսումնասիրության արդյունքում ստացված ողջ տեղեկատվության արդյունքների համադրման ու վերլուծության մեթոդներով:

Ըստ անցկացրած ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների՝ պարզել ենք, որ զինված ուժերում կատարված ինքնավնասումների և ինքնասպանությունների հնարավոր նախադրյալներն ու դրդապատճառները նպատակային է դիտարկել երկու տարբեր հարթակներում.

- *<u>անհրաժեշտ է ուսումնասիրել և հասկանալ անձի (զինծառայողի) սոցիալ-հոգեբանական զարգացման ողջ ընթացքը մինչ զինվորական ծառայության զորակոչվելը,</u>*
- *<u>զինվորական համակարգում ինքնավնասումների և սուիցիդալ տրամադրությունների զարգացմանը նպաստող հնարավոր գործոնները:</u>*

ՀՀ զինված ուժերի ինքնավնասումների և ինքնասպանության ելքով դեպքերի առնչությամբ իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ զորամասերում ամենադժվար և պատասխանատու գործունեության ոլորտներից է զինծառայողների նման վարքագծի կանխատեսումն ու կանխարգելումը, քանի որ ոչ կառուցողական վարքի դրսևորման նախադրյալներն ու իրավիճակային դրդապատճառները բազմաբնույթ կարող են լինել:

Անձի (զինվորի) սոցիալ-հոգեբանական զարգացման ընթացքը ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշվի առնել վերջինիս ընտանեկան դրությունը, ընտանիքի սոցիալական սանդղակը, ծնողների դաստիարակության և հսկողության ներքո հասունանալը (մեծանալը), ծնողների փոխհարաբերությունները, անձի սոցիալական դիրքը, հարազատների կողմից ցուցաբերված գերխնամքը կամ թերխնամքը, ընտանիքում ձևավորված (տիրող) մթնոլորտը, ինչպես նաև՝ ընտանիքում ազգային և կրոնական հայացքների նկատմամբ վերաբերմունքը: Հաշվի առնելով, որ արժեքների յուրացումը կատարվում է նաև նույնականացման գործընթացի արդյունքում, հետևաբար բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ունեցող ընտանիքում հասունացող պատանու մոտ դեռ մանկական հասակից (ինչու չէ, նորածնային շրջանից) դրված է առողջ սոցիալ-հոգեբանական զարգացման հիմքը. երեխան ծնողների մեջ տեսնում է իր արտացոլանքը, և ջերմության ու խնամքի մեջ մեծացած մանկիկը սկսում է նմանակել ծնողներին (ծնողը երեխայի համար հանդիսանում է նմանակման բազային բաղադրիչ): Առանցքային եմ համարում նաև «ազգային պատկանելության առանձնահատկություններով» դաստիարակվելու գործոնը, քանզի ազգային պատկանելություն ասելով նկատի ենք ունենում նաև հայ ժողովրդի՝ ազգաբնակչության շրջանում արդեն դարեր ի վեր ձևավորված, արմատացած և մշակույթի վերածված այն յուրահատկությունները, որոնք բնորոշում են հայի յուրօրինակ դատողության, մտածելակերպի, դիրքորոշումների, աշխարհընկալման, ինչպես նաև

վարքային, հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական դրսևորումները:

Ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում, ցավոք, դեռ կան սոցիալական և սոցիալ-հոգեբանական տարբեր խնդիրներ ունեցող անօթևան երեխաներ: Նշված երեխաները, տարիքային, անձնային և միջավայրին բնորոշ առանձնահատկություններով պայմանավորված, յուրովի են ընկալում կյանքի մատուցած յուրաքանչյուր իրադրային փորձություն և այդ փորձությունները ինքնուրույն հաղթահարելու ճանապարհին հաճախակի են առնչվում տարատեսակ սթրեսային իրավիճակների, իսկ երբեմն էլ, լիարժեք չկարողանալով հաղթահարել որևիցե խոչընդոտ, նրանք (հատկապես անցումային շրջանում) ենթարկվում են հոգեկան տարատեսակ ծանր տրավմաների: Նմանատիպ հոգեկան ծանր վնասվածքները բացասաբար են անդրադառնում երեխայի, դեռահասի հետագա ողջ կյանքին՝ հետք թողնելով անձի առողջ հոգեկան աշխարհի ձևավորման, աշխարհընկալման, հոգեկան և ֆիզիկական զարգացվածության, ինչպես նաև ինքնագիտակցման գործընթացի վրա:

Իհարկե որոշ վերապահումներով կարող ենք ընդունել այն հանգամանքը, որ միջավայրը (խումբը) էական ազդեցություն է ունենում անձի ձևավորման վրա (հատկապես մանկության և դեռահասության տարիներին), և ներխմբային ավանդույթների որոշ վարքային մոդելներ կարծրանում ու ողջ կյանքի համար կենսառձ են դառնում: [2]

Նշված խմբերի անդամների մեծ մասը այլևս չի մասնակցում սոցիալական համընդհանուր խնդիրների լուծման գործընթացներին, և սոցիալական պարտավորությունների կատարման, իսկ երբեմն էլ սեփական արարքների համար պատասխանատվություն ստանձնելուց խուսափելով, դիմում են հակասոցիալական (շեղվող) վարքի դրսևորումների: [3]

Վերը բնութագրվող դեռահասներից որոշների մոտ ձևավորվում է գոյության էքստրիմալության խորնիկ զգացողություն, և նրանք ընտրում են գոյատևման համար հակասոցիալական ճանապարհ (գողություն, խուլիգանություն և այլն), իսկ մյուս մասը, հոգեպես և ֆիզիկապես հյուծվելով, կորցնում է հնարավոր տարատեսակ խոչընդոտներ հաղթահարելու կամքն ու դրսևորում ապասոցիալական (օտարանում են միջավայրից) ինքնաքայքայիչ բնույթի կենսառձ:

(Սոցիալականացում – սոցիալական ադապտացիա, հարմարվել միջավայրին, ընդունել նույն միջավայրին բնորոշ նորմերը (օրենքները) և արժեքները): [4]



Հետազոտության ընթացքում որպես նախադրյալներ ուսումնասիրվել են

«Χ» զորամասի ռիսկային խմբում հաշվառված և լրացուցիչ հսկողություն պահանջող թվով 35 ժամկետային պարտադիր զինծառայողների պատանեկության ու դեռահասության շրջանների սոցիալ-հոգեբանական զարգացման, ինչպես նաև միջավայրում նրանց սոցիալականացման գործընթացները.

Աղյուսակ N 1

1.	Առողջական խնդիրների սահմանափակումներով զինծառայության զորակոչվածներ	35	100%
2.	Ծնողների դաստիարակությունից զուրկ	4	11,4%
3.	Գրագիտության ցածր մակարդակ, բառերի աղքատ պաշար	17	48,5%
4.	Միակողմանի ծնողազուրկ	8	22,8%
5.	Անառողջ մթնոլորտ ընտանիքում	7	20%
6.	Սոցիալապես անապահով ընտանիքներից (ծանր պայմաններ, նպաստառու)	28	80%
7.	Հարազատների շրջանում հոգեկան խնդիրներ ունեցողներ	5	14,2%
8.	Վաղ տարիքից ծխախոտի օգտագործում (մինչև 14 տարեկան)	12	34,2%
9.	Վաղ տարիքից ալկոհոլի և թմրանյութերի օգտագործում (մինչև 14 տարեկան)	3	8,5%
10.	Մտավոր թերզարգացածներ (թուլամտություն), նպատակների որոշակի բացակայություն	12	34,2%
11.	Թշնամություն ծնողների հարազատների նկատմամբ	3	8,5%
12.	Ինքնամփոփություն, կոլեկտիվից մեկուսացում, արտաքինից տանջված ու հոգնած տեսք	15	42,8%
13.	Ինքնավնասման փորձ կատարած (որոնցից երկուսը 2 և ավելի անգամ)	6	17,1%
14.	Աղանդավորներ և աթեիստներ (աթեիստները երկուսն են)	6	17,1%

- *հարմարման առաջնային փուլն անցած (4 և ավելի ամիս) 150 ժամկետային պարտադիր զինծառայողների շրջանում անցկացրած հետազոտությունը (Կետտելի անձի 16 հատկանիշներ բացահայտող հարցաշարի կիրառմամբ).*

Աղյուսակ N 2

Հ/հ	Անձնային հատկանիշը	Ցածր	Միջինից ցածր	Միջին	Միջինից բարձր	Բարձր
1.	Ինքնագնահատական	11%	20%	64%	4%	1%
2.	Ինքնամեղադրանք	4%	2%	23%	31%	40%
3.	Շփվողականություն	20%	25%	47%	5%	3%

- *զինված ուժերում տեղի ունեցած ինքնասպանության որոշ դեպքերի վերլուծությունների ընդհանուր արդյունքների համադրությունը, որը բացահայտում է մի շարք օրինաչափություններ, ինչը դեռ կարիք ունի հետագա առավել խորը մասնագիտական ուսումնասիրության:*

Աղյուսակ N 3

1.	Հրաձգային զենքից	93%
2.	Կախվելու միջոցով	7%
3.	Նախկինում հաշվառված հոգեբուժարանում	7%
4.	Ժամը 24:00-03:00 սահմաններում	27%
5.	Ժամը 13:00-16:00 սահմաններում	27%

Զինծառայողների շրջանում դրսևորվող վերը նշված խնդիրների անհատապես մասնագիտական ուսումնասիրության արդյունքներով կարողանում ենք պատկերացում կազմել նրանց անձնային և հոգեբանական առանձնահատկությունների հոգեբանական նկարագրի մասին, ինչպես նաև կանխատեսելի դարձնել կրիտիկական իրավիճակներում վերջիններիս կողմից հնարավոր դրսևորվող վարքային մոդելները: Հարկ է նշել նաև, որ համապատասխանաբար N3 աղյուսակի շրջանակներում ուսումնասիրության ենթարկված զինծառայողների 73%-ը N1 և N2 աղյուսակներում բնութագրվող որակական հատկանիշներից առնվազն երկուսից երեքի կրողն են:

N1 և N2 աղյուսակների բաղադրիչներով բնութագրվող պատանիները, զորակոչվելով զինվորական ծառայության, նոր միջավայրին և զինվորական ծառայության կանոնակարգված պայմաններին ինքնուրույնաբար դժվարանում են հարմարվել, և հարմարվողականության գործընթացի առաջնային փուլը տևական երկարում է, երբեմն չի ավարտվում, ու նրանք դրսևորում են ապահարմարվողական վարք:

Միևնույն ժամանակ առաջին օգնության, կանխարգելիչ և ուղղորդիչ մասնագիտական միջամտության երբեմնի բացակայությունը նրանց ծանր հոգեկան ճգնաժամային իրավիճակների առաջ է կանգնեցնում: Ծառայության ընթացքում ծագած ցանկացած խնդիր (անգամ մանրուք) դիտարկվում է իբրև անտանելի, իրենց ուժերից վեր, անհնարին մի իրավիճակ: Թվացյալ խնդիրներից և զրկանքներից արագ ձերբազատվելու համար ենթագիտակցաբար երբեմն փորձում են իրենց վրա բևեռել շրջապատի ուշադրությունը և կարող են դրսևորել աուտոդեստրուկտիվ ինքնաքայքայիչ վարք, ինքնավնասում, ինքնասպանության փորձ, ընդհուպ մինչև ինքնասպանություն:

Ինքնասպանության խնդրի առնչությամբ սոցիոլոգիական մոտեցման ներկայացուցիչները «Սուիցիդը կամ սուիցիդալ վարքը» դիտարկում են որպես սոցիալական խմբից անձի օտարացման արդյունքում առաջացած խնդիրների լուծման միջոց, իսկ հոգեբանական մոտեցման ներկայացուցիչները «սուիցիդալ վարք» անվանում են անձի ներքին և արտաքին հոգեկան ցանկացած դրսևորումներ, որոնք կարող են ուղղված լինել սեփական անձը կյանքից զրկելու պատկերացումներին: [6]

Նորակոչիկին ընդհանուր առմամբ կարելի է համարել զինվորական ծառայության պայմաններին սոցիալ-հոգեբանորեն հարմարված, եթե նա իր շրջապատի հետ չունի տևական կոնֆլիկտներ, բավարարված են նրա անվտանգության, ապա սիրված լինելու, այնուհետև հարգանք վայելելու և վերջապես ինքնադրսևորվելու հիմնարար պահանջմունքները: [5]

<u>Զինծառայողների շրջանում ինքնավնասման մտքերի և սուիցիդալ տրամադրությունների զարգացմանը նպաստող հնարավոր գործոններն են՝</u>

- *զինվորական ծառայության հարմարման փուլում սոցիալ-կենցաղային խնդիրները (պայմանները),*

- *չարդարացված հույսերը (հուսալքությունը, հարազատների կողմից հնչեցրած փուչ-սին խոստումները),*
- *հավատքի տկարացումը՝ կրոնական հայացքները (քայքայիչ գործունեություն իրականացնող կրոնական կազմակերպության անդամ հանդիսանալը),*
- *ապատեղեկացվածությունը (մինչ զորակոչվելը զինվորական ծառայության վերաբերյալ այլ պատկերացումներ ունենալը),*
- *առողջական խնդիրներով և կենսակերպի ռեժիմային կտրուկ փոփոխություններով պայմանավորված՝ հարմարվողականության շրջանում նոր միջավայրի և հստակեցված պահանջների նկատմամբ թվացյալ անտանելիության զգացողությունը,*
- *իր կամ ընտանիքի անդամի, մերձավոր հարազատի կողմից գործած անբարո արարքի վերաբերյալ տեղեկության հայտնի դառնալու հանգամանքը,*
- *ազգային առանձնահատկություններով պայմանավորված՝ որևէ վարքի կամ գործողության վերաբերյալ համածառայակիցների /միջավայրի/ կողմից անընդունելի, աններելի և պիտակավորված վերաբերմունքը /արծագանքը/,*
- *զինվորական միջավայրում տիրող հնարավոր բացասական /արատավոր/ երևույթները,*
- *խաղամոլություն, պարտքեր (ֆինանսական, բարոյական և այլն):*

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ զինծառայողների մոտ ինքնաքայքայիչ վարքի ձևավորման համար առանցքային նախադրյալ կարող են հանդիսանալ մինչև զինվորական ծառայության զորակոչվելը նրանց կյանքում տեղի ունեցած կենսական նշանակության վերը թվարկված բացասական գործընթացները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վարդանյան Կամո, Սուիցիդալ հոգեբանության հասկացությունների բառարան, Երևան, 2013, էջ 22:
2. Ռ. Խ. Նեմով, Հոգեբանություն, գիրք-1, Մոսկվա, 2001, էջ 573:
3. Օ. Վ. Խուխլաեվա, Զարգացման հոգեբանություն, Մոսկվա, 2002, էջ 38-54:
4. Ադամյան Կարապետ, Շեղվող վարքի հոգեբանություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Լուսաբաց» հրատարակչատուն, 2012, 79 էջ:
5. Դավիթ Զամալյան, Զինծառայողների հոգեբանական պատրաստության խնդրի շուրջ, Երևան, 2015, էջ 30:
6. Գ. Վ. Ստարշենբաում, Սուիցիդոլոգիա և կրիզիսային հոգեթերապիա, Մոսկվա, 2005, էջ 3-9:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Զինված ուժերում ինքնավնասումների և սուիցիդալ տրամադրությունների ուսումնասիրության հարցի շուրջ

Վիգեն Մանուկյան

Հոդվածում ներկայացված են զինվորական համակարգում զինծառայողների կողմից ինքնաքայքայիչ վարք դրսևորելու առանցքային նշանակության հիմնախնդիրները, նրանց անձնային հատկանիշներն ու սոցիալ-հոգեբանական զարգացման ողջ ընթացքը մինչև ծառայության զորակոչվելը, ինչպես նաև զինվորական ծառայության ժամանակ իրադրային զարգացումներով պայմանավորված հնարավոր նպաստող գործոնները:

Ինքնասպանության ելքով թվով տասնհինգ դեպքերի ուսումնասիրության արդյունքներով վեր են հանվել մի շարք օրինաչափություններ, որոնք դեռևս ունեն հետագա խորը մասնագիտական ուսումնասիրության անհրաժեշտություն:

РЕЗЮМЕ
О вопросах самодеструкций и суицидальных настроений в вооруженных силах
Виген Манукян

Ключевые слова: военная система, самодеструктивное поведение, самоповреждение, самоубийство, процесс социализации, психологическая дезадаптация, дезадаптированное поведение.

В статье представлены ключевые проблемы проявления самодеструктивного поведения военнослужащих в военной системе: их личностные особенности и все течение социально-психологического развития до призыва на военную службу, а также возможные ситуационно обусловленные содействующие факторы в период военной службы.

По результатам изучения пятнадцати случаев самоубийства был выявлен ряд закономерностей, которые требуют дальнейшего углубленного профессионального изучения.

SUMMARY
On Issues of Self-harm and Suicidal Ideations in the Armed Forces
Vigen Manukyan

Keywords: military system, self-destructive behavior, self-harm, suicide, socialization process, psychological maladaptation, maladaptive behavior.

The article presents the key problems of manifestation of the self-destructive behavior of military personnel in the military system: their personal characteristics and the entire course of socio-psychological development before being drafted for military service, as well as possible contributing factors due to situational developments during military service.

Based on the results of a study of fifteen cases of suicide, a number of patterns were identified that still require further in-depth professional study.